«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀԱԱՀ-ԳՀԱՊՁԲ-21/1

ք. Երևան «12» 02 2021թ.

«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամը, ի դեմս ռեկտոր՝ Վ. Ուռուտյանի, ով գործում է Հիմնադրամի կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Գնորդ», մի կողմից, և «Պյոտր Արաբյան Ժիրայրի» ԱՁ-ն, ի դեմս տնօրեն՝ Պ. Արաբյանի, ով գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 229200 /երկու հարյուր քսանինը հազար երկու հարյուր/ ՀՀ դրամ (Վաճառողի հավաստմամբ վերջինս չի հանդիսանում ԱԱՀ վճարող): Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է << դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում: Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին: 8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.12 Պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.13 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.14 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում և Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ	«Պյոտր Արաբյան Ժիրայրի» ԱՁ
ՀՀ, ք. Երևան, Տերյան 74	ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Աբովյան, 7 մ/2, տուն 77
«Արդշինբանկ» ՓԲԸ	«Արդշինբանկ» ՓԲԸ
հ/հ 247010053103	հ/հ 24710032595700000
ՀՎՀՀ 01507028	ՀՎՀՀ 88773367
Ռեկտոր՝ _____ Վ. Ուռուտյան	Տնօրեն՝ _____ Պ. Արաբյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
«____» _____ 2021թ. կնքված
ՀԱԱՀ-ԳՀԱՊՁԲ-21/1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ* - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ**

ՀՀ դրամ

Չ/հ	Ապրանքի								Մատակարարման		
	Միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Անվանումը	ապրանքային նշանը, մակիշը և արտադրողի անվանումը ***	Հատկանիշները (տեխնիկական բնութագիր)	Չ/մ	Միավոր գինը (ՀՀ դրամ)	Ընդհանուր քանակը	Գումար (ՀՀ դրամ)	Հասցեն	Ենթակա քանակը	Ժամկետը
1	44441200/514	Առանցքակալներ շառավղա-գնդիկավոր	NSK 6005; NSK	Շառավղային առանցքակալներ, մոդելը 6005, Տեսակը՝ շառավղա-գնդիկավոր, փակ յուղապահիչ գոտիով: Ներքին տրամագիծ՝ 25 մմ, Արտաքին տրամագիծ՝ 47 մմ, Լայնքը՝ 12 մմ, Ստատիկ բեռնունակությունը՝ 5600 Ն, Դինամիկ բեռնունակությունը՝ 11200 Ն, Նոր, գործարանային փաթեթավորմամբ:	հատ	2200	3	6600	ՀՀ, ք.Երևան, Տերյան 74	3	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում երկկողմ համաձայնագրի հաստատումից հետո՝ Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացույցային օրվա ընթացքում
2	44441200/515	Առանցքակալներ շառավղա-հենակային	NSK 46207: NSK	Շառավղային առանցքակալներ, մոդելը 46207, Տեսակը՝ շառավղա-հենակային, Ներքին տրամագիծ՝ 35 մմ, Արտաքին տրամագիծ՝ 72 մմ, Լայնքը՝ 17 մմ, Ստատիկ բեռնունակությունը՝ 16400 Ն, Դինամիկ բեռնունակությունը՝ 29000 Ն, Նոր, գործարանային փաթեթավորմամբ:	հատ	5500	4	22000	ՀՀ, ք.Երևան, Տերյան 74	4	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում երկկողմ համաձայնագրի հաստատումից հետո՝ Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացույցային օրվա ընթացքում
3	44441200/516	Առանցքակալներ շառավղա-գնդիկավոր	NSK 6207; NSK	Շառավղային առանցքակալներ, մոդելը 6207, Տեսակը՝ շառավղա-գնդիկավոր, փակ յուղապահիչ գոտիով: Ներքին տրամագիծ՝ 35 մմ, Արտաքին տրամագիծ՝ 72 մմ, Լայնքը՝ 17 մմ, Ստատիկ բեռնունակությունը՝ 13700 Ն, Դինամիկ բեռնունակությունը՝ 25500 Ն, Նոր, գործարանային փաթեթավորմամբ:	հատ	4400	2	8800	ՀՀ, ք.Երևան, Տերյան 74	2	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում երկկողմ համաձայնագրի հաստատումից հետո՝ Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացույցային օրվա ընթացքում

4	44441200/517	Առանցքակալներ շառավղա-գնդիկավոր	NSK 6206; NSK	Շառավղային առանցքակալներ, մոդելը 6206, Տեսակը՝ շառավղա-գնդիկավոր, փակ յուղապահիչ գոտիով: Ներքին տրամագիծ՝ 30 մմ, Արտաքին տրամագիծ՝ 62 մմ, Լայնքը՝ 16 մմ, Ստատիկ բեռնունակությունը՝ 10000 Ն, Դինամիկ բեռնունակությունը՝ 19500 Ն, Նոր, գործարանային փաթեթավորմամբ:	հատ	3000	4	12000	ՀՀ, ք.Երևան, Տերյան 74	4	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում երկկողմ համաձայնագրի հաստատումից հետո՝ Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացույցային օրվա ընթացքում
5	44441200/518	Առանցքակալներ հենակա-գնդիկավոր	NSK 51122; NSK	Շառավղային առանցքակալներ, մոդելը 51122, Տեսակը՝ հենակա-գնդիկավոր: Ազատ օղակի արտաքին տրամագիծ՝ 145 մմ, Ձիգ օղակի արտաքին տրամագիծը՝ 145 մմ, Ազատ օղակի անցքի տրամագիծը՝ 110,2 մմ, Ձիգ օղակի անցքի տրամագիծը՝ 110 մմ, Առանցքակալի բարձրությունը՝ 25 մմ, Ստատիկ բեռնունակությունը՝ 186000 Ն, Դինամիկ բեռնունակությունը՝ 65500 Ն, Զանգվածը ՝ 1,08 կգ, Նոր, գործարանային փաթեթավորմամբ:	հատ	9000	1	9000	ՀՀ, ք.Երևան, Տերյան 74	1	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում երկկողմ համաձայնագրի հաստատումից հետո՝ Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացույցային օրվա ընթացքում
6	44163171/503	Բարձր ճնշման ռետինե ճկախողովակ	-	Աշխատանքային ճնշումը՝ ոչ պակաս 200 բար, Քայքայող ճնշումը ոչ պակաս 600 բար, Ամրացման պարուրակը M20x1,5, Բանալու տեղը՝ S24	մետր	4000	8	32000	ՀՀ, ք.Երևան, Տերյան 74	8	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում երկկողմ համաձայնագրի հաստատումից հետո՝ Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացույցային օրվա ընթացքում
7	44423640/509	Յուղապահիչ մանժետ	NQK.SF, 2-40x60; DEDE IMP & EXP COMPANY	Յուղապահիչ մանժետ 2-40x60 ըստ ԳՕՍ 8752 -79, նախատեսված պտտվող լիսեռ տիպի մեքենամասերի աշխատանքային լծորդումների յուղապահման, փոշուց պաշտպանման համար	հատ	200	10	2000	ՀՀ, ք.Երևան, Տերյան 74	10	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում երկկողմ համաձայնագրի հաստատումից հետո՝ Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացույցային օրվա ընթացքում
8	44423640/510	Յուղապահիչ մանժետ	NQK.SF	Յուղապահիչ մանժետ 2-30x52 ըստ ԳՕՍ 8752 -79, նախատեսված պտտվող լիսեռ տիպի մեքենամասերի աշխատանքային	հատ	200	6	1200	ՀՀ, ք.Երևան, Տերյան 74	6	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում երկկողմ համաձայնագրի

			NQK.SF, 2-30x52; DEDE IMP & EXP COMPANY	լծորդումների յուղապահման, փոշուց պաշտպանման համար							հաստատումից հետո՝ Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացույցային օրվա ընթացքում
9	44423640/511	Յուղապահիչ մանժետ	NQK.SF, 2-35x58; DEDE IMP & EXP COMPANY	Յուղապահիչ մանժետ 2-35x58 ըստ ԳՕՍ 8752 -79, նախատեսված պտտվող լիսեռ տիպի մեքենամասերի աշխատանքային լծորդումների յուղապահման, փոշուց պաշտպանման համար	հատ	200	4	800	ՀՀ, ք.Երևան, Տերյան 74	4	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում երկկողմ համաձայնագրի հաստատումից հետո՝ Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացույցային օրվա ընթացքում
10	44423640/512	Յուղապահիչ մանժետ	NQK.SF, 2-105x130; DEDE IMP & EXP COMPANY	Յուղապահիչ մանժետ 2-105x130 ըստ ԳՕՍ 8752 -79, նախատեսված պտտվող լիսեռ տիպի մեքենամասերի աշխատանքային լծորդումների յուղապահման, փոշուց պաշտպանման համար	հատ	650	4	2600	ՀՀ, ք.Երևան, Տերյան 74	4	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում երկկողմ համաձայնագրի հաստատումից հետո՝ Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացույցային օրվա ընթացքում
11	44521160/502	Հոլովակավոր շղթա ՊՐ-19,05	-	Հոլովակավոր շղթա ՊՐ-19,05 մակնիշի (ըստ ГОСТ 13568-97) կամ համարժեք քայլը՝ 19,05 մմ, թիթեղների ներքին հեռավորությունը՝ 12,7 մմ, հոլովակի տրամագիծը՝ 11,91 մմ, ներքին թիթեղի բարձրությունը՝ 18,2 մմ: Շղթայի նյութը և մնացյալ պարամետրերը ըստ ոլորտի ստանդարտի: Քայքայիչ ճիգը՝ 31,8 կՆ	մետր	3500	7	24500	ՀՀ, ք.Երևան, Տերյան 74	7	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում երկկողմ համաձայնագրի հաստատումից հետո՝ Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացույցային օրվա ընթացքում
12	42121100/502	Հիդրոգլան	IMC-40/25-160; Hydrosila	Երկու սնուցման խցիկներով, մխոցակոթի միացման հանգույցները՝ օղակաձև, առանցքակալներով: Պարամետրերը՝ 40x25, մխոցակոթի աշխատանքային երկարությունը 160 մմ	հատ	35000	2	70000	ՀՀ, ք.Երևան, Տերյան 74	2	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում երկկողմ համաձայնագրի հաստատումից հետո՝ Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացույցային օրվա ընթացքում
13	44163180/504	Պրոֆիլ ուղղանկյուն խողովակ	-	Ուղղանկյուն խողովակ, ըստ ГОСТ 8645-68 Լայնությունը՝ 100մմ, Բարձրությունը՝ 70 մմ, Պատի հաստությունը՝ 5 մմ, 1 մետրի զանգվածը ~12,22 կգ	կգ	514.3247	73.3	37700	ՀՀ, ք.Երևան, Տերյան 74	73.3	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում երկկողմ համաձայնագրի հաստատումից հետո՝

				Նյութը՝ պողպատ 3							Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացույցային օրվա ընթացքում

* «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված պահանջներով ցանկացած հղման դեպքում կիրառելի է «կամ համարժեք» բառերը: **Ապրանքները պետք է լինեն նոր, չօգտագործված, անհրաժեշտության դեպքում՝ գործարանային փաթեթավորմամբ: Տեղափոխումն ու բեռնաթափումը իրականացնում է մատակարարը:**

** **Պայմանագիրը կնքվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա** և սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվելու է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:Ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան **տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը**:

*** Հրավերով նախատեսվում է մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի՝ ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացում, եթե վերջիններս կիրառելի են առաջարկվող ապրանքներ համար:

Յուրաքանչյուր անվանատող հանդիսանում է առանձին չափաբաժին:

ԳՆՈՐԴ

«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ
ՀՀ, ք. Երևան, Տերյան 74
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 247010053103
ՀԿՀՀ 01507028

Ռեկտոր՝ ---------- Վ. Ուռուտյան
/ստորագրություն/
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

«Պյոտր Արաբյան Ժիրայրի» ԱՁ
ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Աբովյան,
7 մ/շ, տուն 77
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 24710032595700000
ՀԿՀՀ 88773367

Տնօրեն՝ ---------- Պ. Արաբյան
/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված N 2
«_____» _____ 2021թ. կնքված
ՀԱԱՀ-ԳՀԱՊՁԲ-21/1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Հ/Հ	Միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման	Ապրանքի անվանումը	Չափման միավորը	Ընդհանուր քանակը	Վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ.՝ համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում**												
					I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	Գումար (ՀՀ դրամ)
1	44441200/514	Առանցքակալներ շառավղա-գնդիկավոր	հատ	3	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
2	44441200/515	Առանցքակալներ շառավղա-հենակային	հատ	4	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
3	44441200/516	Առանցքակալներ շառավղա-գնդիկավոր	հատ	2	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
4	44441200/517	Առանցքակալներ շառավղա-գնդիկավոր	հատ	4	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
5	44441200/518	Առանցքակալներ հենակա-գնդիկավոր	հատ	1	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
6	44163171/503	Բարձր ճնշման ռետինե ճկախողովակ	մետր	8	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
7	44423640/509	Յուղապահիչ մանժետ	հատ	10	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
8	44423640/510	Յուղապահիչ մանժետ	հատ	6	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
9	44423640/511	Յուղապահիչ մանժետ	հատ	4	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
10	44423640/512	Յուղապահիչ մանժետ	հատ	4	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
11	44521160/502	Հոլովակավոր շղթա ՊՐ-19,05	մետր	7	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
12	42121100/502	Հիդրոգլան	հատ	2	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
13	44163180/504	Պրոֆիլ ուղղանկյուն խողովակ	կգ	73.3	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*
*** Հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ:*
Պայմանագիրը կնքվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և վճարման ժամանակացույցը լրացվելու և կնքվելու է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:

ԳՆՈՐԴ
«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ
ՀՀ, ք. Երևան, Տերյան 74
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 247010053103
ՀՎՀՀ 01507028

Ռեկտոր՝ _____ Վ. Ուռուտյան
/ստորագրություն/
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ
«Պյոտր Արաբյան Ժիրայրի» ԱՁ
ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Աբովյան,
7 մ/շ, տուն 77
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 24710032595700000
ՀՎՀՀ 88773367

Տնօրեն՝ _____ Պ. Արաբյան
/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված N 3
«____» _____ 2021թ. կնքված
ՀԱԱՀ-ԳՀԱՊՁԲ-21/1 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ

_____

_____

գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

Պատվիրատու

_____

_____

գտնվելու վայրը _____
հհ_____
հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Կ.Տ.

Ապրանքը ընդունեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Կ.Տ.

Հավելված 3.1
«____» _____ 2021թ. կնքված
ՀԱԱՀ-ԳՀԱՊՁԲ-21/1 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____

պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

12.02.2021 թվականին կնքված **N ՀԱԱՀ-ԳՀԱՊՁԲ-21/1** գնման պայմանագրի

ք. Երևան «01» 03 2021թ.

«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրաը, ի դեմս ռեկտոր՝ Վ. Ուռուտյանի, ով գործում է Հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Պյոտր Արաբյան Ժիրայրի» ԱՁ-ն, ի դեմս տնօրեն՝ Պ. Արաբյանի, ով գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, «Գնումների մասին» ՀՀ օրենսդրությամբ, հիմք ընդունելով 12.02.2021թ. կնքված **N ՀԱԱՀ-ԳՀԱՊՁԲ-21/1** ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 1.1, 8.5 և 8.14 կետերը և հաշվի առնելով, որ Գնորդի մոտ չի վերացել գնման պահանջը, նախատեսվել են ֆինանսական միջոցներ, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

Հետագա համագործակցության և Պայմանագրով նախատեսված ապրանքների ձեռքբերման համար հատկացված **229200 /երկու հարյուր քսանինը հազար երկու հարյուր/ ՀՀ դրամ (Վաճառողի հավաստմամբ վերջինս չի հանդիսանում ԱԱՀ վճարող)**, շրջանակներում գնում կատարելու նպատակով Կողմերը որոշեցին:

1. Հաստատել Պայմանագրի գնման ժամանակացույցը ըստ սույն համաձայնագրի հավելված 1-ի:
2. Հաստատել Պայմանագրի վճարման ժամանակացույցը ըստ սույն համաձայնագրի հավելված 2-ի:

2. Այլ պայմաններ

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Կողմերի պատասխանատվության հետ կապված այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի թիվ 1 և 2 հավելվածները հանդիսանում են սույն համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ	«Պյոտր Արաբյան Ժիրայրի» ԱՁ
ՀՀ, ք. Երևան, Տերյան 74	ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Աբովյան, 7 մ/շ, տուն 77
«Արդշինբանկ» ՓԲԸ	«Արդշինբանկ» ՓԲԸ
հ/հ 247010053103	հ/հ 24710032595700000
ՀԿՀ 01507028	ՀԿՀ 88773367
Ռեկտոր՝ ---------- Վ. Ուռուտյան	Տնօրեն՝ ---------- Պ. Արաբյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
«12» փետրվարի 2021թ. կնքված
N ՀԱԱՀ-ԳՀԱՊՁԲ-21/1 ծածկագրով պայմանագրի
« » _____ 2021թ. կնքված
թիվ 1 համաձայնագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Ապրանքի										
	Միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Անվանումը	ապրանքային նշանը, մակիշը և արտադրողի անվանումը ***	Հատկանիշները (տեխնիկական բնութագիր)	Հ/մ	Միավոր գինը (ՀՀ դրամ)	Ընդհանուր քանակը	Գումար (ՀՀ դրամ)	Մատակարարման		
									Հասցեն	Ենթակա քանակը	Ժամկետը
1	44441200/514	Առանցքակալներ շառավղա-գնդիկավոր	NSK 6005; NSK	Շառավղային առանցքակալներ, մոդելը 6005, Տեսակը՝ շառավղա-գնդիկավոր, փակ յուղապահիչ գոտիով: Ներքին տրամագիծ՝ 25 մմ, Արտաքին տրամագիծ՝ 47 մմ, Լայնքը՝ 12 մմ, Ստատիկ բեռնունակությունը՝ 5600 Ն, Դինամիկ բեռնունակությունը՝ 11200 Ն, Նոր, գործարանային փաթեթավորմամբ:	հատ	2200	3	6600	ՀՀ, ք.Երևան, Տերյան 74	3	Սույն համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացույցային օրվա ընթացքում
2	44441200/515	Առանցքակալներ շառավղա-հենակային	NSK 46207: NSK	Շառավղային առանցքակալներ, մոդելը 46207, Տեսակը՝ շառավղա-հենակային, Ներքին տրամագիծ՝ 35 մմ, Արտաքին տրամագիծ՝ 72 մմ, Լայնքը՝ 17 մմ, Ստատիկ բեռնունակությունը՝ 16400 Ն, Դինամիկ բեռնունակությունը՝ 29000 Ն, Նոր, գործարանային փաթեթավորմամբ:	հատ	5500	4	22000	ՀՀ, ք.Երևան, Տերյան 74	4	Սույն համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացույցային օրվա ընթացքում
3	44441200/516	Առանցքակալներ շառավղա-գնդիկավոր	NSK 6207; NSK	Շառավղային առանցքակալներ, մոդելը 6207, Տեսակը՝ շառավղա-գնդիկավոր, փակ յուղապահիչ գոտիով: Ներքին տրամագիծ՝ 35 մմ, Արտաքին տրամագիծ՝ 72 մմ, Լայնքը՝ 17 մմ, Ստատիկ բեռնունակությունը՝ 13700 Ն, Դինամիկ բեռնունակությունը՝ 25500 Ն, Նոր, գործարանային փաթեթավորմամբ:	հատ	4400	2	8800	ՀՀ, ք.Երևան, Տերյան 74	2	Սույն համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացույցային օրվա ընթացքում
4	44441200/517	Առանցքակալներ շառավղա-գնդիկավոր	NSK 6206; NSK	Շառավղային առանցքակալներ, մոդելը 6206, Տեսակը՝ շառավղա-գնդիկավոր, փակ յուղապահիչ գոտիով: Ներքին տրամագիծ՝ 30 մմ, Արտաքին տրամագիծ՝ 62 մմ, Լայնքը՝ 16 մմ, Ստատիկ բեռնունակությունը՝ 10000 Ն, Դինամիկ բեռնունակությունը՝ 19500 Ն, Նոր, գործարանային փաթեթավորմամբ:	հատ	3000	4	12000	ՀՀ, ք.Երևան, Տերյան 74	4	Սույն համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացույցային օրվա ընթացքում

5	44441200/518	Առանցքակալներ հենակա-գնդիկավոր	NSK 51122; NSK	Շառավղային առանցքակալներ, մոդելը 51122, Տեսակը՝ հենակա-գնդիկավոր: Ազատ օղակի արտաքին տրամագիծ՝ 145 մմ, Ձիգ օղակի արտաքին տրամագիծը՝ 145 մմ, Ազատ օղակի անցքի տրամագիծը՝ 110,2 մմ, Ձիգ օղակի անցքի տրամագիծը՝ 110 մմ, Առանցքակալի բարձրությունը՝ 25 մմ, Ստատիկ բեռնունակությունը՝ 186000 Ն, Դինամիկ բեռնունակությունը՝ 65500 Ն, Զանգվածը ՝1,08 կգ, Նոր, գործարանային փաթեթավորմամբ:	հատ	9000	1	9000	ՀՀ, ք.Երևան, Տերյան 74	1	Սույն համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացույցային օրվա ընթացքում
6	44163171/503	Բարձր ճնշման ռետինե ճկախողովակ	-	Աշխատանքային ճնշումը՝ ոչ պակաս 200 բար, Քայքայող ճնշումը ոչ պակաս 600 բար, Ամրացման պարուրակը M20x1,5, Բանալու տեղը՝ S24	մետր	4000	8	32000	ՀՀ, ք.Երևան, Տերյան 74	8	Սույն համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացույցային օրվա ընթացքում
7	44423640/509	Յուղապահիչ մանժետ	NQK.SF NQK.SF, 2-40x60; DEDE IMP & EXP COMPANY	Յուղապահիչ մանժետ 2-40x60 ըստ ԳՕՍ 8752 -79, նախատեսված պտտվող լիսեռ տիպի մեքենամասերի աշխատանքային լծորդումների յուղապահման, փոշուց պաշտպանման համար	հատ	200	10	2000	ՀՀ, ք.Երևան, Տերյան 74	10	Սույն համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացույցային օրվա ընթացքում
8	44423640/510	Յուղապահիչ մանժետ	NQK.SF NQK.SF, 2-30x52; DEDE IMP & EXP COMPANY	Յուղապահիչ մանժետ 2-30x52 ըստ ԳՕՍ 8752 -79, նախատեսված պտտվող լիսեռ տիպի մեքենամասերի աշխատանքային լծորդումների յուղապահման, փոշուց պաշտպանման համար	հատ	200	6	1200	ՀՀ, ք.Երևան, Տերյան 74	6	Սույն համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացույցային օրվա ընթացքում
9	44423640/511	Յուղապահիչ մանժետ	NQK.SF NQK.SF, 2-35x58; DEDE IMP & EXP COMPANY	Յուղապահիչ մանժետ 2-35x58 ըստ ԳՕՍ 8752 -79, նախատեսված պտտվող լիսեռ տիպի մեքենամասերի աշխատանքային լծորդումների յուղապահման, փոշուց պաշտպանման համար	հատ	200	4	800	ՀՀ, ք.Երևան, Տերյան 74	4	Սույն համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացույցային օրվա ընթացքում

10	44423640/512	Յուղապահիչ մանժետ	NQK.SF, 2-105x130; DEDE IMP & EXP COMPANY	Յուղապահիչ մանժետ 2-105x130 ըստ ԳՕՍ 8752 -79, նախատեսված պտտվող լիսեռ տիպի մեքենամասերի աշխատանքային լծորդումների յուղապահման, փոշուց պաշտպանման համար	հատ	650	4	2600	ՀՀ, ք.Երևան, Տերյան 74	4	Սույն համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացույցային օրվա ընթացքում
11	44521160/502	Հոլովակավոր շղթա ՊՐ-19,05	-	Հոլովակավոր շղթա ՊՐ-19,05 մակնիշի (ըստ ГОСТ 13568-97) կամ համարժեք քայլը՝ 19,05 մմ, թիթեղների ներքին հեռավորությունը՝ 12,7 մմ, հոլովակի տրամագիծը՝ 11,91 մմ, ներքին թիթեղի բարձրությունը՝ 18,2 մմ: Շղթայի նյութը և մնացյալ պարամետրերը ըստ ոլորտի ստանդարտի: Քայքայիչ ճիգը՝ 31,8 կՆ	մետր	3500	7	24500	ՀՀ, ք.Երևան, Տերյան 74	7	Սույն համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացույցային օրվա ընթացքում
12	42121100/502	Հիդրոգլան	IMC-40/25-160; Hydrosila	Երկու սնուցման խցիկներով, մխոցակոթի միացման հանգույցները՝ օղակաձև, առանցքակալներով: Պարամետրերը՝ 40x25, մխոցակոթի աշխատանքային երկարությունը 160 մմ	հատ	35000	2	70000	ՀՀ, ք.Երևան, Տերյան 74	2	Սույն համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացույցային օրվա ընթացքում
13	44163180/504	Պրոֆիլ ուղղանկյուն խողովակ	-	Ուղղանկյուն խողովակ, ըստ ГОСТ 8645-68 Լայնությունը՝ 100մմ, Բարձրությունը՝ 70 մմ, Պատի հաստությունը՝ 5 մմ, 1 մետրի զանգվածը ~12,22 կգ Նյութը՝ պողպատ 3	կգ	514.3247	73.3	37700	ՀՀ, ք.Երևան, Տերյան 74	73.3	Սույն համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացույցային օրվա ընթացքում

ԳՆՈՐԴ

«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ
ՀՀ, ք. Երևան, Տերյան 74
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 247010053103
ՀՎՀՀ 01507028

Ռեկտոր՝ _____ Վ. Ուռուտյան
/ստորագրություն/
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

«Պյոտր Արաբյան Ժիրայրի» ԱՁ
ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Աբովյան,
7 մ/2, տուն 77
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 24710032595700000
ՀՎՀՀ 88773367

Տնօրեն՝ _____ Պ. Արաբյան
/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված N 2
«12» փետրվարի 2021թ. կնքված
N ՀԱԱՀ-ԳՀԱՊՁԲ-21/1 ծածկագրով պայմանագրի
« » _____ 2021թ. կնքված
թիվ 1 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի																		
Հ/Հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Չ/Մ	քանակ	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել ըստ ամիսների, այդ թվում՝ 2021թ-ի													
					հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	**Ընդամենը**	
1	44441200/514	Առանցքակալներ շառավղա-գնդիկավոր	հատ	3	-	6600	6600	6600	6600	6600	6600	6600	6600	6600	6600	6600	**6600**	
2	44441200/515	Առանցքակալներ շառավղա-հենակային	հատ	4	-	22000	22000	22000	22000	22000	22000	22000	22000	22000	22000	22000	**22000**	
3	44441200/516	Առանցքակալներ շառավղա-գնդիկավոր	հատ	2	-	8800	8800	8800	8800	8800	8800	8800	8800	8800	8800	8800	**8800**	
4	44441200/517	Առանցքակալներ շառավղա-գնդիկավոր	հատ	4	-	12000	12000	12000	12000	12000	12000	12000	12000	12000	12000	12000	**12000**	
5	44441200/518	Առանցքակալներ հենակա-գնդիկավոր	հատ	1	-	9000	9000	9000	9000	9000	9000	9000	9000	9000	9000	9000	**9000**	
6	44163171/503	Բարձր ճնշման ռետինե ճկախողովակ	մետր	8	-	32000	32000	32000	32000	32000	32000	32000	32000	32000	32000	32000	**32000**	
7	44423640/509	Յուղապահիչ մանժետ	հատ	10	-	2000	2000	2000	2000	2000	2000	2000	2000	2000	2000	2000	**2000**	
8	44423640/510	Յուղապահիչ մանժետ	հատ	6	-	1200	1200	1200	1200	1200	1200	1200	1200	1200	1200	1200	**1200**	
9	44423640/511	Յուղապահիչ մանժետ	հատ	4	-	800	800	800	800	800	800	800	800	800	800	800	**800**	
10	44423640/512	Յուղապահիչ մանժետ	հատ	4	-	2600	2600	2600	2600	2600	2600	2600	2600	2600	2600	2600	**2600**	
11	44521160/502	Հոլովակավոր շղթա ПР-19,05	մետր	7	-	24500	24500	24500	24500	24500	24500	24500	24500	24500	24500	24500	**24500**	
12	42121100/502	Հիդրոգլան	հատ	2	-	70000	70000	70000	70000	70000	70000	70000	70000	70000	70000	70000	**70000**	

13	44163180/504	Պրոֆիլ ուղղանկյուն խողովակ	կգ	73.3	-	37700	37700	37700	37700	37700	37700	37700	37700	37700	37700	37700	**37700**

ԳՆՈՐԴ

«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ
ՀՀ, ք. Երևան, Տերյան 74
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 247010053103
ՀՎՀՀ 01507028

Ռեկտոր՝ _____ Վ. Ուռուտյան
/ստորագրություն/
L.S.

ՎԱՃԱՌՈՂ

«Պյոտր Արաբյան Ժիրայրի» ԱՁ
ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Աբովյան,
7 մ/շ, տուն 77
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 24710032595700000
ՀՎՀՀ 88773367

Տնօրեն՝ _____ Պ. Արաբյան
/ստորագրություն/
L.S.